

տական քննութեան կը վերաբերի ստուգելու այս կարծիքը:

ԺԹ. դարուն, ընդերկրեայ սեղանին և ջրհորի վիճակի տեղեկութիւնը աւելի սեղմ եւ մանրակրկիտ քննութիւնները 1893 ին սկսուած եկեղեցիին հողերու պարպումի մասին տեղեկագիրներ ունին: Այն ատենէն սկսեալ ընդերկրեայ սեղանը նորոգուած է և սկսան շինել միջինդարեան շինուածքը տնտրապատ ոճով մը որ, բարեխտաբար, յարգած է ԺԲ. գորու յատակագրի: ՄԻՐՏԻՉ եղով. ԱՂԱԽՈՒՆԻ:

## Ն Ի Ի Թ Ե Ր

### ՊՈՒԼԿԱՐԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Շաբ. Սիոն 1934, էջ 187 էն)

Այսքան թռնողայի եկեղեցւոյն վրայօք: Ստորեւ կուտամ ցանկը իմ 1931 ին հոն գտած հայ տապանագիրներուն:

1. Բարձրաքանդակ, մարմար կատարեալ վիճակի մէջ, իբր սանդուխի քար գործածուած.

Այս է տապան հանգ  
բսեան մահեստի  
Գրիգորի դուստր  
Վառվառին որ հանգեա  
ւ ի Տր. ՌձՁԸ (1739)

Այս տապանագիրը հրատարակուած է բայց թուականը կը նշանակուի ՌձՄԸ (1709) (1):

2. Հին տաճարի աւերակի քարերէն, խորաքանդակ.

Այս է տապան եւ հանգստան  
գեաքաղ յեղմամբս (?) մահ  
եստի խաչիկին որ հանգեա (ի Տր.)  
քվն ՌձՀԸ (1729) ին

3. Նոյնպէս.

Այս է տապան հան  
գստան Պուխո  
ւքեցի Մարգանի որդ  
ի Թադոսին որ հանգե  
աւ քվին  
ՌձՀ (1721) ին

Այս է տապան հան  
գիստան Պուխ  
րուքեցի Գրիգոր  
ի որդի Մելիսեդ  
ին որ հանգեա ի  
քվին Ռձ  
ՀԹ (1730) ին

4. Նոյնպէս տապանաքար մը որմէ փոքր ջրաւաղան մը շինուած է պարտէզին մէջ, անարուեստ կերպով, և որուն վրայ կայ հայ արձանագրութիւն մը սա թուականաւ.

Ռձ (?)

5. Նոյնպէս, կոշտ գրով սղագրեալ տապանագիր.

Այս է տապան հան (գտեալն)

Մղնեցի Եր. Պողոսի  
որդի Եր. Յարութիւն որ  
հանգեա ի Քս.

քվ. ՌձՄԱ (1702) ին

Այս տապանագիրը հրատարակուած է միայն թուականը ՌձՄ (1701) նշանակուած է (2):

6. Գեղեցիկ և բարձրաքանդակ մարմար տապան.

Շունչ մարտնակն ի հող եղծայ  
որով եղի ի նոյն դարձայ  
որդի կոչիս Եր. Յոհաննի  
հեղ մահեստի Մկրտումի  
որ ի յերկրէն Արեւելցի  
ի հաղաքին Շոռոքեցի  
բարեպատեօս առն իւխանի  
վարուքն պարկեօս եւ գովելի  
որք հանդիպի սոյն տապանի  
իւրեւրան տու գողորմիս  
Թ. ՌԻՄԸ (1789) Յունվարի 2 (6) ին

Այս տապանագիրն ալ հրատարակուած է, քիչ ինչ տարբերութեամբ (3):

7. Հին աւերակի քարի վրայ տարբեր երեք տապանագիրք.

Այս է տապան եւ հ այս է տապան հանգ  
անգստան ստան . . . . .

Գեաքաղ յեղմամբս Մա Եր. . . . . որդի  
րգիսի որդի Մասո Աղապեկին որ հ  
ւրին որ հանգեա անգեա ի Քս.  
ի Քս. քվն ՌձՀԲ (1723) քվն ՌձՀԲ (1723)

8. Նոյնպէս հին քար.

Այս է տապան հանգս  
տան Շեմաքաղցի Սամվիլի  
որդի մահեստի Ջազարիսին որ  
հանգեա ի քվին ՌձՁ (1731)  
ին

9. Խոշոր մետրոպիտան երկաթագիր, խորաքանդակ.

Շոռոքցի  
Եր. Յոհաննի

(1) Բազմավէպ, «Թռնողայի Անհետացած Հայ Գաղութէն Նշխարներ»: Հաւաքեց՝ Ս. Տէրտէրեան. 1931, էջ 536:

(2) Նոյն, 1932, էջ 116: (3) Նոյն, 1932, էջ 116:

ՌՄԺԳ (1764) ին

Սեպտեմբրի Ժ (10) ին

Այս ալ հրատարակուած է<sup>(\*)</sup>:

10. Հին քար, հաւանաբար հնագոյն տապանագիրը: Բարձրաքանդակ քարին կուշտին միտրոպեան երկաթագիր, շատ զժուար վերծանելի:

Այս է սալան լղս....ի

sr....ի որդի Բ....ն

Բվին Ռձ. երրորդ գիր մ'ալ որ ըստ իս Ի կամ Լ է, որով հաւասար է 1671 կամ 1681 ի:

11. Նման նախորդին միայն տապանագիրը երկայնքին:

Այս է Ազգապատգի Ղազարի

որդի Յոհաննէսին

ՌՄԺԳ (1765) ին

Մարտի Ա (1) ին

12. Բարձրաքանդակ մարմար տապան երկաթագիր:

Անցաւորք հանապարհի  
սեսեք շիրիմս այս գովելի  
բանդի է սա զուռ. սալանի  
արդար մանկան Աբրահամի  
ունոյ սբ. յաստեանի  
ընդերցոյ նոր Սիոնի  
որ է որդի սա Գրիգորի  
հեզ մահեստւոյ եւ իշխանի  
սբ. հաւասով առ Տեք փոխի  
մանուկ սիօք ըս հասակի  
ի ման նա էս ար Ժ առ Ռձձ (1730)  
թողեալ կսկիծ իր ծնողի  
առ ամենագրին խեղճ ու լալի  
սարակուսեալ կեոօք Եղի  
անմխիթար վեաւ երկրի:

Ստորեկ կայ նաև մինադրի մը հաւաքածակ մը մէջ: Այս տապանագիրը անթուական է երկու տող պակասաւոր հրատարակուած է<sup>(\*)</sup>:

13. Նման նախորդին է անոր ալ կողմը:

Նայեցարուք ծնունդի երկրի  
ի սոյն տապանս որ տեսանի  
եղեալ կայ ասս ի պահեստի  
մարմին սիկնոյ Հիւրիխանի  
էր կողակից սա Գրիգորի  
մահեստւոյ եւ բարեպատի  
սեղեալ բնիկ Թոնովպի  
ընդ առն իւրում սա կենակցի

պարկեւս վարուք... արի  
ամուսնացոյց դուստր եւ որդի  
եւ վախճանի Հայոց Բվի  
Ռձձ (1730)

որք հանդիպիք տուք զողորմի:

Այս ալ հրատարակուած է պակասաւոր<sup>(\*)</sup>:

Առնք էլին իմ տեսած տապանաքարերս ու անոնց արձանագրութիւնները. ասոնցմէ զատ ուրիշներ ալ եղած ըլլալուն, որոնք սակայն անհետացած են այսօր: Այս անհետացածներէն մէկ քանիին տապանագիրըրը ունինք հրատարակուած, որոնք հոս կ'աւելցնեմ, շարունակելով իմ ընդհանուր թուահամարներս:

14. Տապանաքար մարմարայ:

Հարք մարք հանդիպիք շիրմիս  
ափսոսացեք զխեղճուկ գեղիս  
մահն գրաւեց զիս եղկելիս  
եղ ի բանքի այս տապանիս  
սաս խեղճ տարին լի հիւրիս  
եւ հօրն իմոյ մահեստիս  
որոյ անունն է Գրիգորիս  
եւ մօրն իմոյ Հուրիխանիս  
եւ քեռն իմոյ Մարիամիս  
Հայոց մեծաց բուսակնիս  
Համիս որք հանդիպիք տուք զողորմ  
Ռձձ (1721) իս<sup>(\*)</sup>: [միս

15. Այս է տապան հանգիստարան Գեւաթաղոյ Կոստանդի որդի Յեղուլին որ հանգեալ է Քրիստոս Ռձձ (1726) ին<sup>(\*)</sup>:

16. Այս է տապան Գեսաթաղոյ որդի Ղաբանի մահեստի խաչիկին հանգեալ Ռձձ (1729)<sup>(\*)</sup>:

Այս տապանագիրը կ'արտապահ հրատարակութենէ: Անոնց իւր հաւաքիչ կը ստորագրէ Ս. Տէրտէրեան, որ սակայն նոյն իսկ ամենակարեւոր ծանօթութիւններ անգամ չի տար իր հրատարակութեան մէջ: Անոր հրատարակած տապանագիրներէն ժամք պակասաւոր են, և ժամք ալ տեղ տեղ սխալ: Այսու հանդերձ զովել է որ կրցեր է ձեռք անջընել ցանկ մը Թոնովպի յիշատակարաններու և զանոնք հրատարակած է:

(6)

Թ. ՔԻԻՐՏԵԱՆ

(\*) Նոյն, 1932, էջ 116:

(\*) Բազմավէպ, 1931, էջ 536: (6) Անդ:

(7) Բազմավէպ, 1931, էջ 536:

(8) Բազմավէպ, 1931, էջ 116: (6) Անդ: